ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ԱՊՐԻԼԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 88

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի ԹԻՎ 23 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 10-րդ հոդվածի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հուլիսի 30-ի N01/17.2/5499-18 հանձնարարականի **որոշում եմ**.

1. Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2015 թվականի հունիսի 04-ի <<Վերին Պտղնի համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնի անձնագրերը հաստատելու և համայնքի ղեկավարի 2007 թվականի հունվարի 30-ի թիվ 2,3,4,5, 2009 թվականի օգոստոսի 3-ի թիվ 19 և 2010 թվականի հունիսի 9-ի թիվ 23 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ որոշմամբ հաստատված NN1,2,3,4,5 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի <<Գիտելիքներ և հմտություններ բաժնում>> <<Իրավական ակտերի մասին>> բառերը փոխարինել <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> բառերով, ինչպես նաև իրավական ակտերի անվանումները համապատասխանեցնել գործող օրենքներին:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19թ.ապրիլի 22
գ.Վերին Պտղնի